



## «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՏՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ»

23 Հունվարի 2017թ.

ՇԱՏՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՈՐՈՇՈՒՄ N 1- Ն

1..Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափի հաստատում .  
(Ձեկուցող Ա. Մարտիրոսյան քարտուղար )

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափի հաստատում:

Ղեկավարվելով ՀՀ „ՏԻՄ” օրենքի 16-րդ հոդվածի 18 և 19-րդ հոդվածների դրույթներով  
Շատվան համայնքի ավագանին

Որոշեց.

### **1. Հաստատել Շատվան Տեղական տուրքեր սահմանել ներքոհիշյալ չափով. Տեղական տուրքեր**

1.1 Համայնքի տարածքում Նոր կառուցվող օբյեկտների , շենքերի , շինությունների  
շինարարության թույլտվության համար.

ա) մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան ինչպես նաև մինչև 200 քմ.

ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների  
համար 4500 դրամ .

բ) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար մինչև 20քմ.- ից մակերես ունեցող օբյեկտի  
համար 900 դրամ .

գ) 20քմ. ից ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտի 1500 դրամ.

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների , քաղաքացիական այլ  
օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 5000 դրամ

1.3 Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինությունների ներսում ոգելից խմիչքների  
վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 դրամ.

1.4 26- 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինությունների ներսում ոգելից խմիչքների  
վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ.

1.5 Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար 150 դրամ .

1.6 Արտաքին գովազդի համար 1500 դրամ.

1.7 Դատարկ գովազդային վահանակի համար 400 դրամ.

### **2. Շատվան համայնքի տարածքում տեղական վճարներ սահմանել ներքոհիշյալ չափով.**

2.1 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար  
2000 դրամ.

2.2 Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին ձևը փոփոխելու ,

վերակառուցելու աշխատանքներ կատարելու հետ տեխնիկատնտեսական պլաններ մշակելու ու

հաստատելու, ավարտված շինության շահագործումը փաստագրելու համար ՏԻՄ –ի մատուցած ծառայության դիմաց փոխհաստատման վճար 3000 դրամ.

2.3 ՏԻՄ-ի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հաստատելու, հետ վերցնելու և ՏԻՄ –ի մատուցած տծառայության դիմաց փոխհատուցման վճար 2000 դրամ.

2.4 Քաղաքացիների կողմից ներկայացված հայտերի պայմանագրերի և այլ փաստաթղթերի իսկությունը հաստատելու համար 1000 դրամ.

2.5 ՏԻՄ-ի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վերցնել 1000 դրամ .

2.6 Համայնքի ծառայության վճար 200 դրամ.

### **3. Տեղական տուրքերի և վճարների արտոնություն սահմանել.**

3.1 1990թ. առ այսօր ԼՂՀ և ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ վիրավորված ազատամարտիկների և զինծառայողների ընտանիքներին 100 %.

3.2 1990թ. առ այսօր ԼՂՀ և ՀՀ սահմանների պաշտպանության մասնակից ազատամարտիկների և զինծառայողների ընտանիքներին 50 %.

3.3 Սոցիալապես առավել անապահով ընտանիքներին 100 %.

3.4 Բազմազավակ (3 և ավելի երեխաներ ունեցող ) ընտանիքներին 100 %.

3.5 միայնակ 75 տարեկանից բարձր և միայակ թոշակառուներից կազմված ընտանիքներին 50 %.

3.6 Երկու անչափահաս և 75 տարեկանից բարձր 2 երկու թոշակառուների խնամքի տակ ունեցող ընտանիքներին 50 %.

3.7 2-րդ և 3-րդ կարգի հաշվանդամներին 50 %.

3.8 1-ին կարգի հաշվանդամներին 100 %.

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ 10-րդ օրը:

Կողմ՝ -5

Դեմ -0

Ձեռնպահ – 0

### **Շատվան համայնքի ավագանիներ՝**

1. Տ. Աբրահամյան \_\_\_\_\_
2. Հ. Առաքելյան \_\_\_\_\_
3. Ս. Հարությունյան \_\_\_\_\_
4. Ս. Միմոնյան \_\_\_\_\_
5. Ա. Մարտիրոսյան \_\_\_\_\_

### **Շատվան համայնքի ղեկավար՝**

*Լ. Աբրահամյան*